

ձվարանային ցածր պահուստի ռիսկի խմբի դեռահասների հետազոտության համալիրում հակամյուլերյան, ֆոլիկուլիթանիչ հորմոնների և ձվարանների անտրալ ֆոլիկուլների քանակի դինամիկ գնահատումը: Դեռահասի արտասեռական և գինեկոլոգիական հիվանդությունների, սոցիալ-տնտեսական կարգավիճակի մանրամասն վերլուծության արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ վահանաձև գեղձի հորմոնալ և գործիքային հետազոտությունները դեռահասի կանոնավոր ֆիզիկական զննման կարևորագույն բաղադրիչն են:

Դեռահասների կյանքի որակի գնահատման արդյունքում եզրակացվել է, որ ձվարանի վրա վիրահատական միջամտություն կրած և ձվարանի գոյացություն ունեցող դեռահասների մոտ տուժում է կյանքի որակի ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական բաղադրիչը: Դեռահասի կյանքի որակի վրա ներգործություն ունեն նաև արտասեռական և գինեկոլոգիական հիվանդությունները, դեռահասի սոցիալ-տնտեսական գործոնները՝ առաջացնելով արատավոր օղակ: Հետևաբար, կյանքի որակի գնահատման մոտեցումների ներդրումը բժշկական պրակտիկայում հնարավորություն կտա գնահատել և բարելավել դեռահասի առողջությունը, հիվանդության ընթացքը, բուժման արդյունավետ հսկողությունը:

Հեղինակի կողմից առաջարկվում է նաև մանկական գինեկոլոգիայի բաժանմունքներում ներդնել խորհրդատվական սենյակի գաղափար՝ վերարտադրողական տարիքում ձվարանային, ցածր պահուստի ռիսկի խմբում գտնվող դեռահասի, նրա ծնողի կամ խնամակալի հետ հետագա վերարտադրողական պլանները քննարկելու, վարման պլանը մշակելու համար: «Կենսաբանական ժամացույցի» ճիշտ գնահատումը թույլ կտա վերարտադրողական տարիքում չհետաձգել և ժամանակին իրականացնել մանկածնման ֆունկցիան:

Արդիականության գնահատումը և աշխատանքի հավաստիությունը

Ատենախոսի կողմից կատարված հետազոտական աշխատանքի թեմայի ընտրությունը, դրված նպատակը և խնդիրները, ստացված եզրակացությունները չափազանց կարևոր են մանկաբարձագինեկոլոգիական պրակտիկայում: